զի գարնանային հաւասարակածը մարտի 21ին ըլնայ, ինչպէս էր Նիկիոյ ժողովոյն ատենը ։ Ուստի հրամայեց որ յաջորդ տարին հոկտեմբերի 4 ըսելէն ետքը 5 չըսեն, հապա 15, 16 և այլն . և ահա աս է հին և նոր տոմարին իրարմէ տարբեր ըլլալուն գըլխաւոր պատճառը, որ առաջ 10 օր էր, ետքը եղաւ 11, և հիմա 12 օր է . այսինքն հին տոմարին յունուարի 1ը նոր տոմարին յունուարի 13 է, և այլն ։ Ուրիշ մանր գիտելիքները տոմարագիտաց կը թողունք ։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Տորդիկ[1] ։



ՏՈՐԴԻԿԸ հին ատենը խիստ յարգի թռչուններէն մէկն էր, մանաւանդ Հռովմայեցւոց մէջ, մսին փափկութեանը համար ։ Մանաւոր վանդակներու մէջ կը պահէին ու ծեծած թուզով և ուրիշ պտուղներով ու ալիւրով կը գիրցընէին, ու ինչուան տասնական դենարի կը ծախէին ամէն

¹ Արտըճ գուշու ։

մէկը, որ հիմակուան հաշուով գրեթէ տասուերկու ղուրուշ ըսել է։ Իսկ հիմա Եւրոպացիք լորամարգին տորդիկէն վեր կը համարին։

Աս Թռչունին յատուկ նշանն աս է որ փետուրները, մանաւանդ կուրծքիններն ու փորուն վրայինները՝ բոլոր բծերով զարդարուած են։ Երգող Թռչուններէն է նաև ասիկայ. կերակուրը միջատ ու ճճի է, բայց պտուղ ալ կը սիրէ, մանաւանդ սին[1]։ Ձմեռը սաստիկ ըլլայ նէ՝ բարեխառն երկիրներու անտառները կը քաշուի. խումբով տեղէ տեղ կ'երթայ, ու գարնան և աշնան ատենները ուրիշ Թռչուններուն պէս ասոր ալ փետուրներուն գոյները կը փոխուին։

Եւրոպայի ու Ասիայի բարեխառն կողմերը չորս հինգ տեսակ տորդիկ կայ՝ իրարմէ մէյմէկ քիչ տարբեր։ Ամենէն մեծ տեսակին երկայնութիւն է 11 բթաչափ, կտուցը 1 բթաչափ, պոչը 4։ Միջակ տեսակին երկայնութիւնը 10 բթաչափ է, և վզին ու փորուն տակը մոխրագոյն։ Ասկէ պզտիկ տեսակ մը կայ որ ուրիշներէն աւելի լաւ կ'երգէ, և շուտ կ'ընտանենայ. անոր համար երգեցող տորդիկ դրեր են ոմանք անունը. ասոր փորը կարմրագոյն է։ Իսկ ամենէն պզտիկ տեսակին երկայնութիւնն է 8 բթաչափ։ Հոս դրուած պատկերին մէջ առջինը միջակ տորդիկն է, իսկ երկրորդը աս ամենէն պզտիկը։

Ամսոց բնական նշանները։

ԱՄՍՈՑ վրայ աստղաբաշխական և քաղաքական գիտելիքները մեծերու համար պարզ կերպով բացայայտելէն ետքը, աղէկ կ'ըլլայ որ տղոց ալ բնական նշանները ցուցընենք՝ ամէն մէկ ամիսը ճանչնալու։ Աս նշանները ուրիշ բան չեն, բայց եթէ իւրաքանչիւր ամսոց մէջ պատահած երկրիս կամ եղանակաց փոփոխութիւնները։ Մէկ դաստիարակ մըն է աս նշանները գրողը իր սիրելի աշակերտին, անոր համար պարզ և համառօտ բաներ են. դու ալ, ուսումնասէր մանուկ, կարդա՛ ասոնք և միտքդ պահէ. վասն զի աւելի քեզի համար գրուած են քան թէ մեծերու։ Սկսինք հիմա աս գեղեցիկ ամսէն՝ որուն մէջ մտանք։

[1] Խուժէ։

Ապրիլ։

ԿԸ ՏԵՍՆԵՍ կ'իմանաս, Գրիգորիկ, որ սաստիկ հովերը կը դադրին, և անոյշ հովեր կուգան, որոնց զեփիւռ կ'ըսենք։

Լեռներուն վրայէն ձիւները կը հալին, ու գետերը կ'իջնան։

Ասոր համար շատ գետեր և հեղեղատներ լեցուելով դաշտերը կը կոխեն։

Ան բլուրներն որ առաջ հեռուանց քարոտ անապատ կ'երևային, հիմա կանաչով ծածկուած կ'երևան։

Ամէն ծառ կանաչցած կը տեսնուի, ամէն տեղ ծաղիկներով կը զարդարուի։ Ահ, թէ որ սառած եղեամը աս ծաղիկներուն վրայ իջնայ նէ՝ ի՜նչպէս վնասակար պիտի ըլլայ ասոնց։

Ծառերուն ճիւղերը կը զարդարուին ծաղիկներով, դաշտերը կը գեղեցկանան ինչուան թուփերն ու փշերն ալ կ'արթըննան։

Բոլոր բնութեան երեսը կը զուարթանայ. ամէն արարածք գարունը կը բարևեն։

Գառնուկները մօրերուն քովէն երթալով կը ցատքըտեն։

Կովն ու եզը իրենց դանդաղութիւնը մոռցածի պէս կը ժրանան։

Մանր թռչնիկները մեծ ուրախութեամբ անդադար կը ճլուըլան, կը վազվըզեն, կը ճխան։

Աս ամսուս մէջ շատ վարուցան կ'ըլլայ, և տունկեր կը տնկուին։

Առջի օրերը կը ցանուի կտաւը յարմար երկրի մէջ։